ՏԵՂԵԿԱՆՔ

# 2017-2019թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-հուլիս)

ԱԺԲԳ

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %










Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2019թ. հունվար-հուլիսին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է ՝ 106.8%, այն դեպքում, երբ 2018թ. հունվար-հուլիսին 2017թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ եղել է 109.1%, իսկ 2017թ. հունվար-հուլիսին 2016թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 106.7%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-հուլիսին կազմել է 1,078,974.5 մլն.դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 124,407.3 և 179,384.0 մլն. դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-հուլիսին կազմել է 166,748.2 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 4,013.3 և 22,888.8 մլն. դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-հուլիսին կազմել է 1,696,787.4 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 189,524.9.0 և 350,025.8 մլն. դրամով. իսկ այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-հուլիսին կազմել է 1,086,376.0 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 152,726.0 և 311,838.8 մլն. դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-հուլիսին 2018թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 108.4%, 2018 և 2017թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 104.3%-ի և 112.7%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2019թ. հունվար-հուլիսին 2018թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 104.5%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 110.4%-ի և 91.3%-ի պարագայում:

* Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ցուցանիշը բացակայում է, քանի որ 2019թ. դրա ամփոփումը կատարվելու է եռամսյակային կտրվածքով

ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2017-2019թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-հուլիս)

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







Առևտրի շրջանառության իրական աճը 2019թ. հունվար-հուլիսին 2018թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 108.9%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև  2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 108.9%-ի և 112.2%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվար-հուլիսին 2018թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 115.2%, 2018 և 2017 թթ., ինչպես նաև 2017 և 2016 թթ.  նույն ժամանակաշրջանների 118.7%-ի և 111.8%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հուվար-հուլիսին կազմել է 187,561.4 մլն.դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 5,038.8 և 3,982.8 մլն. դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հուվար-հուլիսին կազմել է 732,195.4 մլն. դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 124,573.3 և 181,408.7 մլն. դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հուվար-հուլիսին կազմել է 144,310.8 մլն. դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 5,378.2 և 6,666.3 մլն. դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հուվար-հուլիսին կազմել է 14,906.9 մլն.դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 173.4 և 658.8 մլն. դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-հուլիսին 2018թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 109.5%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև  2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 89.3%-ի և 109.1%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար- հուլիսին 2018թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 110.4%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 109.3%-ի և 117.5%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-հուլիսին 2018թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 98.6%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև  2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 104.7%-ի և 101.4%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-հուլիսին 2018թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 100.7%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև  2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 99.3%-ի և 109.0%-ի պարագայում:

ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2017-2019թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-հուլիս)

### Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




### Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




### Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ







Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հուվար-հուլիսին կազմել է 259,793.0 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 60,357.1 և 113,513.9 մլն. դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հուվար-հուլիսին կազմել է 146,455.9 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 7,847.4 և 18,165.4 մլն. դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հուվար-հուլիսին կազմել է 233,046.0 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 31,258.3 և 62,627.1 մլն. դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվար-հուլիսին 2018թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 127.3%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 136.2%-ի և 111.8%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվար-հուլիսին 2018թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 104.7%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.4% և 103.9%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվար-հուլիսին 2018թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 116.3%, 2018 և 2017 թթ., ինչպես նաև  2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 116.7%-ի և 120.8%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2019թ. հունվար-հուլիսին 2018թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 101.9%, 2018թ. հունվար-հուլիսին 2017թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ` 102.4%, 2017թ. հունվար-հուլիսին 2016թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ`  100.5%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2019թ. հուլիսի վերջի դրությամբ կազմել է 744,868.0 մլն դրամ, ինչը 178,154.0 մլն. դրամով կամ 31.4%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 158,232.0 մլն. դրամով կամ 27.0%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2019թ. հուլիսի դրությամբ կազմել է 82820 մարդ, ինչը 11 մարդով կամ 0.01%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 7462 մարդով կամ 8.3%-ով պակաս է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2019թ. հուլիսի դրությամբ կազմել է 63243 մարդ, ինչը 4834 մարդով կամ 7.1%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 12795 մարդով կամ 16.8%-ով պակաս է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2017-2019թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-հուլիս)

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)




ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)




Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ




Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինանսավորման աղբյուրները, ընթացիկ գներով, մլն դրամ




Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2019թ. հունվար-հուլիսին կազմել է 4,195.5 մլն. դոլար, ինչը 93.6 մլն. դոլարով կամ 2.3%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 969.5 մլն. դոլարով կամ 30.1%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2019թ. հունվար-հուլիսին կազմել է -1,360.5 մլն. դոլար, ինչը 16.1 մլն. դոլարով կամ 0.8%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 459.3 մլն. դոլարով կամ 51.0%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2019թ. հունվար-հուլիսին կազմել է 1,417.5 մլն դոլար, ինչը 41 մլն. դոլարով կամ 3.0%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 255.1 մլն. դոլարով կամ 21.9%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2019թ. հունվար-հուլիսին կազմել է 2,778.0 մլն դոլար, ինչը 52.5 մլն. դոլարով կամ 1.9%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 714.4 մլն. դոլարով կամ 34.6%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2019թ. հունվար-հուլիսին կազմել է 178325 դրամ, ինչը 9335 դրամով կամ 5.5%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 12072 դրամով կամ 6.3%-ով պակաս է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2019թ. հունվար-հուլիսին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 107,302.7 մլն. դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -55,283.6 մլն. դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -52,019.1 մլն. դրամ: 2018 թ. ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է -18,104.2 մլն. դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 46,268.6 և -28,164.4 մլն դրամ: 2017թ. ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է -66,309.1 մլն. դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 87,830.4 և - 21,521.3 մլն. դրամ:

* Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ինտերնետային կայքերի հրապարակումները, համապատասխանաբար՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի և ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ